

Ու չէր հասկանում մեկը մյուսին՝
Մեկը մյուսին հիմար կարծելով:
Գալիս են խմբվում մարդիկ նորանոր,
Քննում են նրան, ճգնում են իզուր,
Անունն են հարցնում նրան վանահոր,
Վանականների անուններն ուզում:
Ու խոսում է նա տխուր ու մոլոր
Ու թվում է նա անուններ քազում
Ու շնչում է նա կարծես երազում...

Զրույց է սա հին ու ավանդական՝
Քաղված գրչագիր մի հիշատակից.
Ծատ դարեր առաջ կար մի վանական,
Ու չէր հավատում նա սուրբ հրաշքին:

— Բերե՛ք,—ասում է վանականը այդ,—
Մատյանը վանքի, իմ միակ վկան,
Ի՞նչ է կատարվում, չգիտեմ ես արդ,
Մի՞թե այնտեղ էլ հետքերս չկան:

Մատյանը դեռ կար.
Թերթում են երկար
Եվ մաշված ու հին մի թերթի՝ «...»
Գտնում են նշված անուններն ամեն՝
Գրված իրենցից... յոթը դար առաջ:
Գտնում են նույնիսկ անունն էլ նրա,
Այս ծանոթությամբ.
«Էր նա վանական,
Կորալ պատահմամբ,
Ու չէր հավատում նա սուրբ հրաշքին...»

Այնժամ ապշեցին բոլորը մեկեն,
Ու տեսան, ինչպես հանկարծ ճերմակեց

Այն վանականի միրուքը սաթե,
Զգվեց դեպի վար, որպես արծաթե
Հազար թելերե լուսեղեն մի խորձ,
Ու գետին ընկավ հառաչով տխուր,
Առավ մի բոտ՝ հո՛ղ վանականը այն,
Ծորթերին սեղմեց ճիշով բարձրաձայն
Ու ասաց այսպես.
— Ների՛ր ինձ, մայր հող, հավատում եմ
քեզ...

Ապա փոքրացավ մարմինը նրա,
Փլվեցին մեկ-մեկ ուկերը ներսում,
Գալարվեց ընկավ նա հողի վրա,
Միրուքը ճերմակ փոխարկվեց լույսի,
Եվ առատացող իր թեթև լույսում
Լուծվեց վանականն անվորդով, անցավ,
Փոխարկվեց լույսի, ցնդեց, վերացավ...
Զարմանքը մնաց նրա փոխարեն
Եվ տողերը այս՝ այն հին մատյանում.

«Էր նա վանական՝
Կորած պատահմամբ...
Գտնվեց ուղիղ յոթը դար հետո,
Հավատաց հողին, հրաշքին, լույսին
Եվ փոխվեց լույսի...»

Զրույց է սա հին ու ավանդական՝
Քաղված դարավոր մի հնամաշ գրքից:
Միրելի երկիր, հող իմ հայրական,
Զավակն եմ ես քո լուսե հրաշքի:

2/12 1948 թ.

Կալաֆաթ

(Ռազմագերիների ճամբար)

Ս Ո Ւ Տ Է Ր...

Ընկերոջս՝ Գ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
Կամ ճամփեքին գերության՝ ուժից ընկած ու փոշոտ,
Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ կարոտից այրվելիս,
Դեմքս մոայլ ու տխուր ու հայացքս մշուշոտ:

Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ մահամերձ ու հյուծված
Մեռնողների շարքի մեջ, որպես շնչող մի կմախք,
Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար հոբոտ արցունքից դեմքս թաց,
Մահը թառած ուսերիս՝ բուխ նման թեղ կախ:

Սո՛ւտ է, ընկեր սիրելի, որ դեռ գերի եմք հիմա,
Եվ շողում են մեզնից վեր օտար արև ու լուսին,
Սուտ ես և դո՛ւ, որ ճատած ահա տխուր իմ դիմաց,
Մտորում ես անընդհատ ինձ հետ մեկտեղ-միասին:

Սո՛ւտ են և այս սրատամ ժանգոտ լարերն ամրապիրկ,
Որ մեր ճամբարն են զատում դրսի ազատ աշխարհից,



Մասունցի Դավիթ

Սո՛ւտ է և այն, որ հիմա մերոնք տանք հանդարտիկ
Արտաավում են ու սգում արտամորմոք վշտերից:

Տե՛ս, փոված է իմ առաջ Թրիլիսին արևոտ՝
Տարիների ու սիրո ճոխ պատմությանն ուսերին.
Արծաթ Քունն է գալարվում իր ոտքերի փոշու մոտ,
Որպես երկրորդ առեղծված Ծիր-Կաթնային լույսերի:

Տե՛ս, գարուն է վերստին, ծաղկած ծառերն են շողում,
Ցնցողելով իրենց բույրն անձրևորեն ամենուր,
Տե՛ս, գարունից էլ պալծառ տիեզերքն է ողողում
Ծով հմայքը կույսերի՝ որպես ցնորք, որպես հուր:

Օ՛, աղջիկներ, աղջիկներ, դուք օձիրան ու ճկուն,
Սիրտս ինչքա՛ն է նախանձել մայրերին՝ ձեր կոխտած,
Ու որքա՛ն է թուլքը ձեր իմ աչքերից խել բուն
Կամ ձիգ տվել ինձ անքուն պողոտայից-պողոտա:

Տե՛ս, վազում եմ ես կրկին կարոտներով լեւի-լեցուն,
Քամուն տված սև մագերս ու փողպատու ծածանվող,
Որ դասերս մոռացած ու նրա հետ թևանցուկ,
Դավթի լեառը բարձրանամ ծաղկամացառ կածանով:

Տե՛ս, խնդում է նա նորից, չարանճի մանկան պես,
Խփում է ինձ ու վազում, որպես վայրի եղջերու,
Տե՛ս, իր թևից բռնելով, կատակել եմ ուզում ես,
Բաց փախչում է նա նորից՝ հեռվում ծաղիկ փնջելու...

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
 Կամ ճամփեքին գերության և՛ ուժապատ, և՛ փոշոտ,
 Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ կարոտից այրվելիս,
 Դեմքս մոպս ու տխուր ու հայացքս մշուշոտ:

Դա երազ էր մի մթին, ծանր կոշմար ու ցնորք.
 Չի՛ արտասվել իմ հոգին արևի տակ դեռ տրտում,
 Տե՛ս, քայլում եմք ես ու մա Երևանից դեպի Նորք,
 Որ երբ իջնի երեկոն, կրկին դառնանք դեպի տուն:

Վրկին վառենք լույսը մեր, մատենք շուրջը սեղանի,
 Կարդանք Տերյան, Վարուժան, Սիամանյոն ու Դուրյան,
 Մինչև քունը ծրարե իր աչերը գեղանի,
 Դառնան երազ ու տեսիլք կարոտները մեր բուրյան:

Իսկ վաղորդյան թարմ օդում, երբ սարյակը ճովողե,
 Երբ ծիտիկներն արթնացած երգեն բազմած թթեմուն,
 Կրկին ժպտան իմ առաջ իր բիբերը խաղողե,
 Լցնելով իմ հոգու մեջ մի քաղցրատանջ խենթություն:

Ու դուրս ելնեմ ես տնից, գործի գնամ երգելով,
 Սուրբ էջերը համբուրեմ մատյանների ձեռագիր,
 Որ գրուցեն հոգուս հետ՝ դրվագներով սիրտ գերող
 Հանճարները մեր անցյալ, գուսանները տարագիր:

Որ խոյանա իմ առաջ Նարեկացին՝ որպես սար,
 Դարերի մուծն իր բաշին, կրծքին տավիղ հոգնաղի,
 Որ Մասիսը մեր տեսնեմ Աստծու գահին հավասար,
 Եվ ի՛նքն՝ Աստված մախանձե մեր սրտաբովս ծիծաղին:

Որ շշմռան մախանիքս ինձ շրթունքներով հուր բոցի,
 Երկինքն ի վար թավալած բաժակները դառնության,
 «Մենք շանթեր ենք—երկնված Ազատության հնոցից,
 Անմատուց է մեր հոգին շղթաներին բռնության...»:

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
 Կամ ճամփեքին գերության՝ քրտնաթաթախ ու փոշոտ,
 Ցնորք էր այն, որ տեսար ինձ կարոտից այրվելիս,
 Դեմքս մոպս ու տխուր ու հայացքս մշուշոտ:

Սուտ է և ա՛յն, որ հիմա, սրտի անմար դողոցով,
 Ես գրիչս եմ թաթախում հույզերիս ծով կարոտում,
 Չէ՛ որ գուցե հենց հիմա, ես, Արուսյան փողոցով,
 Անհոգ մի երգ շուրթերիս, շտապում եմ դեպի տուն...

8 ապրիլի 1948 թ.

ՏԻՄԻՇՈՒՐԱ

(Ռազմագերիների ճամբար)

